ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մարտի 2011 թվականի N 80-Ա

ք. Հրազդան

Ն. ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2006 թվականի օգոստոսի 2-ի N 143-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 56-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող <<Արզականի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ատեստավորման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 1-ի N2 որոշումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արզականի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Նունե Իսրայելյանի*** հետ 2011 թվականի մարտի 3-ից սահմանված կարգով կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ